



ՀՏԴ 631.158:368

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՃՄԱՆ ՈՐԻՆԵՐԸ

Ա.Ե. Ոսկանյան *տ.գ.թ.*, Գ.Վ. Ոսկանյան, *տ.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ashot.voskan@gmail.com, vos.gohar@mail.ru

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բանալի բառեր՝

գյուղատնտեսություն,
ռիսկ,
ռիսկերի կառավարում,
ապահովագրություն,
սուբսիդավորում

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հոդվածում ներկայացված են Հայաստանում պետական աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսության ապահովագրության արդի վիճակը, առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները: Գյուղատնտեսության ապահովագրության գրանցված ցուցանիշների վերլուծության հիման վրա հաշվարկվել է վնասաբերության մակարդակը և կատարվել հստակ գնահատում:

Ներկայացված առաջարկությունների իրագործմամբ հնարավոր է խուսափել Հայաստանում պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության օրինաչափ զարգացման շեղումներից և ապահովել իրականացվող ծրագրի երաշխավորված շարունակականություն:

Նախաբան

Ցանկացած երկրի գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ռիսկերի կառավարման արդյունավետ գործիքների կիրառմամբ:

Ի տարբերություն տնտեսության այլ ճյուղերի՝ գյուղատնտեսությունում առկա են բազմաթիվ ռիսկեր, որոնք, ըստ բնույթի և ծագման աղբյուրների, կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի՝ արտադրական, ֆինանսական, շուկայական, օրենսդրական (ինստիտուցիոնալ): Դրանք բացասական ազդեցություն են գործում արժեչղթայի բոլոր մասնակիցների վրա:

Գոյություն ունեն գյուղատնտեսական ռիսկերի կառավարման տարբեր գործիքներ, որոնք ներառվում են չորս կատեգորիաներում:

1. Ռիսկերի մեղմում. արտադրական տեխնոլոգիաների փոփոխում, բարձրակարգ սերմնանյութի օգտագործում, վնասատուների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների իրականացում, պահուստների ձևավորում, գյուղական ենթակառուցվածքների և ճանապարհների բարելավում և այլն:
2. Ռիսկերի փոխանցում. ապահովագրություն:
3. Ռիսկի կրկնապատկում. ռիսկային իրադրությունից և իրական վնասներ կրելուց հետո համեմատաբար փոքր ֆերմերային տնտեսություններն արտադրության ընդհատումը կանխելու և եկամուտները մեղմելու համար դիմում են ռիսկի հաղթահարման տարբեր միջոցների (արտադրությունը վերսկսելու, շարունակելու և դրամական հոսքեր ապահովելու նպատակով վարկերի և կարճաժամկետ փոխառությունների ստացում): Հաճախ ֆերմերները ռիսկի

հաղթահարման համար վաճառում են արտադրական ակտիվները կամ կենդանիներին, դրամական հոսքերի պահանջը բավարարելու նպատակով տվյալ ժամանակահատվածում ծախսում իրենց իսկ խնայողությունները:

4. Ռիսկերի կառավարման պահուստների ձևավորում. խնայողություններ (Using Digital Tools to Expand Access to Agricultural insurance, 2018):

Ռիսկերի կառավարման համակարգն արդյունավետ է, եթե միաժամանակ կիրառվում են դրանց կառավարման տարբեր գործիքներ: Գյուղատնտեսության ապահովագրությունը ռիսկերի փոխանցման միջոց է, երբ դրանք բաշխվում են մի քանի մասնակիցների (ֆերմեր, ապահովագրող, վերաապահովագրող, պետություն և այլն) միջև (R.A.J. Roberts, 2005):

Նյութը և մեթոդները

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը, որպես ռիսկերի կառավարման գործիք, առաջին անգամ՝ դեռևս 1820-ականներին կիրառվել է Ֆրանսիայում և Գերմանիայում, իսկ 1800-ականների վերջերին՝ կարկուտի ռիսկից պաշտպանվելու համար Նաև Միացյալ Նահանգներում (Agricultural Insurance, 2008): Ներկայումս գյուղատնտեսության ապահովագրությունն աշխարհի տարբեր երկրներում իրականացվում է ինչպես կամավոր (Կանադա, ՌԴ, Գերմանիա), այնպես էլ պարտադիր (Յունաստան, Կիպրոս):

Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման ուղղությամբ աշխատանքներ կատարվել են անկախացումից ի վեր: Ուսումնասիրությունների համաձայն՝ այդ աշխատանքները շարունակական բնույթ չեն կրել, հետևաբար և արդյունք չեն ապահովել:

2019 թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ կառավարությունը հաստատեց «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագիրը, որի հիմնական նպատակը գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը և ամբողջական համակարգի ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարման ուղղված քաղաքականության իրականացումն է: Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման պատասխանատուն «Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» (ԳԱԱԳ) հասարակական կազմակերպությունն է: Այն իրականացնում է գյուղատնտեսության ապահովագրության ընթացիկ ղեկավարումը՝ համակարգելով և կազմակերպելով հիմնական շահառուների (պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, ՀՀ կենտրոնական բանկ, Հայաստանում գրանցված միջազգային կամ օտարերկրյա կազմակերպություններ, լիցենզավորված ապահովագրական ընկերություններ)

հետ աշխատանքները, ինչպես նաև զբաղվում է սպառողների շահերի պաշտպանությամբ (Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր, 2019):

Պիլոտային ծրագրի շրջանակում ապահովագրական ռիսկերն են կարկուտահարությունը, հրդեհը և ցրտահարությունը: Ապահովագրավճարների 50-60 %-ը սուբսիդավորվում է պետության կողմից: Սկզբնական շրջանում նախատեսվում էր միայն խաղողի և ծիրանի ապահովագրություն մի քանի մարզերում, սակայն ծրագրի իրականացման հենց առաջին տարում ընդլայնվեց ինչպես ապահովագրվող մշակաբույսերի (դեղձ, խնձոր, հացահատիկ), այնպես էլ մարզերի ցանկը, ինչը, մեր կարծիքով, խելամիտ չէ: Փորձ կատարվեց արհեստականորեն մեծացնել կնքվող ապահովագրության պայմանագրերի քանակը, սակայն դրա համար անհրաժեշտ էր որոշակի ժամանակ և ոլորտում ձեռք բերված փորձ:

Մի շարք առանձնահատկությունների շնորհիվ գյուղատնտեսության ապահովագրությունն ավելի ռիսկային և ոչ շահութաբեր է մասնավոր ընկերությունների համար: Այս առումով ռիսկայնությունը մեղմելու կարևոր գործիք է վերաապահովագրությունը: Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի շրջանակում նախատեսված է ռիսկերի 90 %-ը վերաապահովագրել Swiss Re ընկերությունում (Լ. Զոչարյան, 2020):

Ագրարային ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է բարձրակարգ և բանիմաց մասնագետների ներգրավմամբ: Ուսումնասիրությունները փաստում են, որ գյուղատնտեսության ապահովագրության գործընթացում ընդգրկված մասնագետները հիմնականում չունեն գյուղատնտեսության ապահովագրության ոլորտի մասնագիտական որակավորում, ինչը բավականին դանդաղեցնում է գործընթացի զարգացումը:

Կնքված ապահովագրական պայմանագրերի քանակը պայմանավորված է ապահովագրության տվյալ դասի վերաբերյալ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրման ընդգրկվածությամբ, մեթոդներով և եղանակներով: Հարկ է նշել, որ մինչ օրս ֆերմերների հետ անմիջական հանդիպումների և հեռուստահաղորդումների միջոցով միայն տրամադրվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն: Մինչդեռ հիմնական նպատակը պետք է լինեի գյուղական համայնքներում ապահովագրական մշակույթի ձևավորումը և տարածումը:

Ֆերմերների հետ հանդիպումների ընթացքում պարզ է դարձել, որ թեև նրանք տեղյակ են, որ Հայաստանում գործում է գյուղատնտեսության ապահովագրություն, այնուամենայնիվ նրանց մեծ մասն ապահովագրության տվյալ դասի մանրամասների ու առանձնահատ-

կությունների վերաբերյալ ունի սահմանափակ տեղեկություն և գիտելիք:

Վնասի գնահատումը գյուղատնտեսության ապահովագրության ամենաբարդ և պատասխանատու գործընթացներից է: Այն ապահովագրական պայմանագրում նշված ռիսկերի հետևանքով ապահովագրված մշակաբույսերին հասցված վնասի փորձագիտական գնահատումն է:

Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության գծով վնասի գնահատումն իրականացնում են վերապատրաստված փորձագետները, որոնք հավաստագիր են ստացել ԳԱԱԳ-ի կողմից: Վերջինիս պաշտոնական կայքի տվյալների համաձայն՝ հավաստագիր ստացած վնաս գնահատողները 36-ն են (<https://aina.am>):

Վնաս գնահատողին վարձատրում է նրա հետ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը: Միջազգային փորձի համաձայն՝ վնաս գնահատողը պետք է տիրապետի ոչ միայն ապահովագրական, այլև՝ ագրոնոմիական գիտելիքների: Սերտիֆիկացված վնաս գնահատողների հետ հանդիպումների արդյունքում պարզվել է, որ նրանք ագրոնոմիական գիտելիքների չեն տիրապետում, ընդ որում՝ մեծ մասն աշխատում է այլ բնագավառներում: Բացի այդ՝ քանի որ այս ոլորտում վարձատրությունը ցածր է, նրանք նախընտրում են պահպանել իրենց հիմնական աշխատանքը:


Արդյունքները և վերլուծությունը

Հարկ է նշել, որ արդեն հայտնի են Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության առաջին տարվա ցուցանիշները: Քանի որ ընդհանուր վերլուծություն և որոշակի եզրակացություններ կատարելու համար անհրաժեշտ են երկարաժամկետ տվյալներ, ուստի հակված ենք հետազայում ևս շարունակել այս ուղղությամբ ուսումնասիրությունները:

Գծապատկերում ներկայացված են գյուղատնտեսության ապահովագրության գծով հավաքագրված ապահովագրավճարները և կատարված հատուցումները 2020 թ. ընթացքում:

Ուսումնասիրությունների համաձայն՝ 2020 թ. կնքվել է 1546 ապահովագրական պայմանագիր, որոնց հաշվեգրված ընդհանուր ապահովագրավճարը կազմել է մոտ 130,5 մլն դրամ, սուբսիդավորված գումարը՝ 69,0 մլն դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների տարածքը կազմել է մոտ 2500 հա, այդ թվում՝ Արմավիրի մարզում՝ 824,4 հա, Վայոց ձորի մարզում՝ 10,3 հա: Ապահովագրված ցանքատարածությունների մեծ մասը զբաղեցրել է հացահատիկը (1329,7 հա), իսկ դեղձի այգիները զբաղեցրել են փոքր տարածք (24,8 հա): Ծրագրի շրջանակում գյուղատնտեսությունում պատահարների հետևանքները մեղմելու նպատակով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 300 ապահովագրական հատուցում (151,3 մլն դրամ): Ապահովագրական հատուցումների գերակշիռ մասը տրամադրվել է Արմավիրի մարզին՝ 47,3 մլն դրամ, իսկ փոքր մասը՝ Տավուշի մարզին՝ 0,4 մլն դրամ (Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, 2020, 2021):

Ապահովագրության արդյունավետությունը բնութագրող կարևոր ցուցանիշներից է վնասաբերության մակարդակը, որը գանձված ապահովագրավճարների և կատարված հատուցումների հարաբերակցությունն է՝ արտահայտված տոկոսներով: Ըստ հաշվարկների՝ գյուղատնտեսության ապահովագրության վնասաբերության մակարդակը 2020 թ. կազմել է մոտ 116 %, ինչը մտահոգիչ է: Պատճառն այն է, որ գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրեր կնքած ապահովագրական (Ինգո Արմենիա, Ռոսգոսստրախ Արմենիա, Սիլ Ինշուրանս) և վերաապահովագրական (Swiss Re) ընկերությունները մասնավոր առևտրային կազմակերպություններ են, որոնց գործունեության հիմնական նպատակը շահույթ ստանալն է:



Գծ. Գյուղատնտեսության ապահովագրության գծով հավաքագրված վճարները և կատարված հատուցումները, ՀՀ դրամ (կազմվել է հեղինակների կողմից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հրապարակած տվյալների հիման վրա):

Հետևաբար, եթե հաջորդ մեկ կամ երկու տարիների ընթացքում վնասաբերության ցուցանիշը կրկին բարձր լինի, այդ կազմակերպությունները կարող են պարզապես դադարեցնել գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրերի կնքումը, և ծրագիրը շարունակական չի լինի: Ուստի ինչպես 2016 թվականին, ներկայումս էլ առաջարկում ենք, որ գյուղատնտեսության ապահովագրությամբ զբաղվեն ոչ թե մասնավոր, այլ պետական ապահովագրական ընկերությունները (Գ. Ոսկանյան, 2015): Կարծում ենք, որ բացասական զարգացումներից խուսափելու համար անհրաժեշտ է կատարել գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության բարձրացմանը նպաստող կշռադատված քայլեր:

Եզրակացություն

ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացումը պայմանավորված է ոչ միայն ոլորտում ապահովագրական համակարգի զուտ ներդրմամբ, այլև այդ գործընթացի մշտադիտարկումով, արդյունավետության գնահատմամբ, թերացումների վերհանմամբ, խնդիրների բացահայտմամբ և ժամանակին լուծմամբ:

Ուսումնասիրությունների համաձայն՝ տնտեսական և սոցիալական նշանակության տեսանկյունից ապահովագրական համակարգի ներդրումը նպաստում է գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը (միջնաժամկետում և երկարաժամկետում), միաժամանակ դրական ազդեցություն է գործում նաև գյուղական բնակչության կյանքում: Ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է մոտիվացնել Հայաստանում գրանցված ապահովագրական ընկերություններին, որպեսզի գործունեություն ծավալեն գյուղական համայնքներում և ընդլայնեն համագործակցությունը հատկապես գյուղատնտեսության բնագավառում:

Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում տարիների ընթացքում մեր կատարած ուսումնասիրությունները, ինչպես նաև Հայաստանում այդ ոլորտի արդի վիճակի վերլուծությունը հիմք են տալիս կատարել առաջարկություններ: Նպատակահարմար է, որ գյուղատնտեսության ապահովագրության համակարգում ներգրավված բոլոր կառույցները (ապահովագրական ընկերություններ, ԳԱԱԳ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն և այլն) ունենան այնպիսի մասնագետներ, որոնք կհամապատասխանեն որոշակի չափորոշիչների (բազային կրթություն, գիտական գործունեություն, գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում աշխատանքային փորձ, որակավորում և այլն) և տարբեր իրավիճակներում կկարողանան կայացնել արդյունավետ որոշումներ:

Գյուղական համայնքներում «ապահովագրական մշակույթի» ձևավորման նպատակով անհրաժեշտ է պատ-

րաստել գովազդային հոլովակներ, որոնց ծախսերը պետք է հոգան ապահովագրական ընկերությունները, ՀՀ կառավարությունը և ԳԱԱԳ-ն: Բացի այդ՝ պետք է մշակել տեղեկատվական թերթիկներ, որոնք սեմինարների ավարտից հետո կտրամադրվեն ֆերմերներին: Ընդ որում՝ սեմինարները պետք է կրեն ոչ միայն տեղեկատվական բնույթ, այլև մանրամասն ներկայացնեն ապահովագրության, մասնավորապես գյուղատնտեսության ապահովագրության առանձնահատկությունները (չապահովագրվող ռիսկեր, չհատուցվող գումար, ապահովագրական ծածկույթ և այլն):

Մինչև ապահովագրության պայմանագիր կնքելն ապահովագրական ընկերության ներկայացուցիչը պարտադիր պետք է այցելի այն տարածքը, որտեղ մշակվում է ապահովագրման ենթակա մշակաբույսը: Առաջին հերթին նա պետք է պարզի՝ արդյոք ֆերմերը պահպանել է ագրոտեխնիկական բոլոր պահանջները և բացահայտի այն ռիսկերը, որոնք սպառնում են բերքի կորստին:

Կարևոր է, որ վնաս գնահատողները տիրապետեն ագրոնոմիական, ապահովագրական և գյուղատնտեսության ապահովագրության գիտելիքների: Նրանց աշխատավարձը պետք է լինի մրցունակ և տրամադրվի ոչ միայն ապահովագրողների, այլև պետության կողմից: Այս առաջարկությունը հետապնդում է երկու հիմնական նպատակ.

- հնարավորություն տալ, որ վնաս գնահատողները ներկայացնեն ոչ միայն ապահովագրական ընկերությունների շահերը (գոյություն ունի մի պարզ ճշմարտություն՝ «Ով վճարում է, նրա շահերն էլ պաշտպանվում են»), այլև իսկապես լինեն որոշակիորեն անկախ,
- նվազեցնել վնաս գնահատողների վարձատրության ծախսերը և նպաստել, որ մասնավոր ապահովագրողներն ավելի շահագրգռված լինեն զբաղվել գյուղատնտեսության ապահովագրությամբ:

ԳԱԱԳ-ն պետք է ակտիվացնի գործունեությունը՝ վերահսկողության իրականացումը, տեղեկատվության տարածումը, ինչպես նաև գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և իր ինտերնետային կայքում հրապարակման միջոցով բարձրացնի աշխատանքի արդյունավետությունը:

Քանի որ գյուղատնտեսության ապահովագրության գծով ապահովագրավճարները սուբսիդավորվում են պետության կողմից, ՀՀ կառավարությունը, ի դեմս Էկոնոմիկայի նախարարության, պետք է հետևողական վերահսկողական գործառնություններ իրականացնի գյուղատնտեսության ապահովագրության գործընթացում ներգրավված բոլոր օղակների նկատմամբ:

Անհրաժեշտ է աստիճանաբար նվազեցնել նաև գյուղատնտեսության ապահովագրությունում վերաապա-

հովագրողի մասնաբաժինը (90 %-ից ցածր), քանի որ վերաապահովագրության միջոցով բավական մեծ գումարներ են դուրս գալիս երկրից, ինչը հանգեցնում է որոշակի բացասական հետևանքների: Մինևս ժամանակ մասնավոր ապահովագրողների գործունեությունը չվտանգելու համար պետությունը կարող է ստանձնել վերաապահովագրողի գործառույթի մի մասը, ինչն ընդունված է շատ երկրներում:

Գրականություն

1. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր, 2019. - Էջ 8-11:
2. Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալության պաշտոնական կայք, <https://aina.am/gyux-apahovagrutun/> (դիտվել է՝ 25.05.2021 թ.):
3. Ոսկանյան Գ. ՀՀ գյուղատնտեսության մեջ ապահովագրական համակարգի ներդրման քաղաքականությունը // Ագրոգիտություն. - N 3-4. - 2015. - Էջ 87-91:
4. Տարեկան հաշվետվություն: Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր 2020. - Եր., 2021. - Էջ 24-25:
5. Զոհարյան Լ. Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում: Ատենախոսության սեղմագիր. - Եր., 2020. - Էջ 8, https://www.bok.am/sites/default/files/2020-06/014_Levon-Kocharyan.pdf (դիտվել է՝ 25.05.2021 թ.):
6. Agricultural Insurance. A Powerful Tool for Governments and Farmers, - 2008, - p. 24.
7. Roberts, R.A.J. (2005). Insurance of Crops in Developing Countries, Food and Agriculture Organization of the United Nations, Rome, - p. 1.
8. Using Digital Tools to Expand Access to Agricultural Insurance, - 2018, - pp. 7-10.

Современное состояние сельскохозяйственного страхования в Армении и пути решения насущных задач

А.Е. Восканян, Г.В. Восканян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: сельское хозяйство, риск, управление рисками, страхование, субсидии

Аннотация. В статье представлено текущее состояние сельскохозяйственного страхования при содействии государства РА, выявлены существующие проблемы и пути их решений. На основе анализа зарегистрированных показателей агрострахования был рассчитан уровень убыточности и дана четкая оценка.

При реализации представленных предложений возможно избежать отклонения от закономерного развития агрострахования при содействии государства в Армении и обеспечить гарантированное продолжение осуществляемой программы.

The Current State of Agricultural Insurance in Armenia and Ways of Solving the Urgent Problems

A.E. Voskanyan, G.V. Voskanyan

Armenian National Agrarian University

Keywords: agriculture, risk, risk management, insurance, subsidies

Abstract. The article considers the current situation of state-funded agricultural insurance in Armenia, some pressing issues and ways of their solution. Based on the analysis of the indices recorded in the sector of agricultural insurance the loss rate has been estimated and clear evaluation has been conducted.

Upon the accomplishment of the introduced recommendations it would be possible to avoid the regular development deviations in the sector of state-funded agricultural insurance in Armenia and to ensure secure continuity of the implemented program.

Ընդունվել է՝ 16.06.2021 թ.
Գրախոսվել է՝ 21.06.2021 թ.